Ավետիք Իսահակյան

Ընկերիս հիշատակին

Ա՜խ, նորից եկավ լալազար գարուն,
Թավշյա դալարով շնչեցին արտեր.
Նորից ծաղկեցին աղբըրաց – արուն,
Հազար բուրմունքով հազարան – վարդեր.
Ավա՜ղ, նա, որին շա՜տ էր նըմանում
Գարունը սիրուն, նա չկա հիմա.
Նրա հետ մեռավ սեր ու խնդություն,
Նրա հետ մեռավ երգը գարունքվա:

Եվ քար – արցունքով կուրծքըս եմ ծեծում
Ու չեմ հասկանում, մի՞թե մեռար դու,
Դո՛ւ, որ երգ էիր, աշխույժ ու կըրակ,
Ի՞նչպես ես մնում սառ հողերի տակ,
Ի՞նչպես չես ելնում, արևը երգում.
Այդպես լո՛ւռ, անշարժ մինչև ե՞րբ մնաս
Գարնան զարդերին համըր, անտարբեր,
Դո՛ւ կյանք, դո՛ւ երազ, իմ անո՛ւշ ընկեր …

1903
Բաքու